ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսագիտական հանրապետական մրցույթի էսսեի ուղեցույց

Նախքան էսսեն սկսելը հիշի՛ր, որ քեզնից չենք ակնկալում ակադեմիական գիտելիքներ՝ ավելի կարևոր է քո աշխարհայացքը թեմայի վերաբերյալ, որն ի ցույց կդնի նաև քո մոտիվացիան:

Էսսեն պետք է կազմված լինի.

- *ներածությունից,*
- *հիմնական մասից,*
- *եզրակացությունից:*

Ներածության հատվածում անհրաժեշտ է ներկայացնել քո դիրքորոշումը թեմայի շուրջ՝ համաձայն ես, թե ոչ. այս հատվածի շարադրանքում քեզ կարող է օգնել նաև «Ինչու՞ է տվյալ թեման կարևոր» հարցի պատասխանը:

Սակայն չմոռանաս, որ ներածությունն ընդամենը քո ամբողջ շարադրանքի նախաբանն է, և 4-5 նախադասությունը բավական է:

Հիմնական մասում անհրաժեշտ է հիմնավորել ներածությունում նշված կարծիքը:

Նախ անհրաժեշտ է պատճառներ ներկայացնել, թե ինչու ես այդ կարծիքին (2-3 պատճառը բավական է): Յուրաքանչյուր պատճառից հետո պետք է հիմնավորես ներկայացված պատճառը և թե ինչու է քո ներկայացրած պատճառը հիմնավոր:

Եթե կարողանաս օրինակներ ներկայացնել, ապա աշխատանքդ միանշանակ կլինի ավելի շահեկան:

Եզրակացությունը թեմայի ամփոփումն է: Հակիրճ ներկայացրու շարադրանքը. նորից նշիր քո հիմնական դիրքորոշումը հարցի շուրջ (դու այն նշել ես ներածության մեջ, այնուհետև հիմնավորել հիմնական մասում), այնուհետև քո ներկայացրած երկու պատճառներից բխող եզրակացությունը՝ մեկ նախադասությամբ:

Բովանդակությանը և կառուցվածքին հետևելուց զատ՝ չմոռանաս ուշադրություն դարձնել շարադրանքի քերականությանը: Հուսով ենք այս ուղեցույցը կօգնի քեզ մրցույթի ժամանակ լավագույնս դրսևորելու գիտելիքներդ:

Մաղթում եմ հաջողություն: